# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՇԱՔԷ ՊԱԹՄԱՆԵԱՆ ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ եւ գոհունակութեամբ անդրադառնում Ձեր ազգօգուտ ու եկեղեցաշէն գործունէութեանը, որի մասին տեղեակ ենք Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարեանի միջոցով:

Սիրելի Տիկին Պաթմանեան, Սիդնիում հայ համայնքի ձեւաւորման ակունքներում էք Դուք եւ Ձեր լուսահոգի ամուսինը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակ Յովհաննէս Պաթմանեանը: Տարբեր յանձնառութիւններով ու կատարած սրտաբուխ բարերարութիւններով Դուք պատնեակ պարիներ Տիրոջ ապաւինութեամբ գնահատելի աջակցութիւն էք բերել Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց փիրախնամ թեմի առաքելութեանը, ազգային կրթօջախների ու հաստատութիւնների գործունէութեանը, որոնք կոչուած են ծառայելու Քրիստոսաւէր մեր ժողովրդին եւ վերազարթօնք բերելու հայութեան ազգային ու հոգեւոր կեանքին: Այսօր Ձեր ընտանիքը մեծապէս սիրուած է աւտրալաբնակ Մեր հաւատաւոր զաւակների կողմից, ովքեր վայելում են Ձեր ազգանուէր ընթացքի բարի արգասիքները:

Բարձր գնահատելով մեր ժողովրդին եւ Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնները եւ սիրով ընդառաջելով թեմակալ Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու



պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք բարեյիշատակ Ձեր ամուսնու հոգու հանգստութեան համար, մաղթելով, որ Տէրն արարչական Իր սիրով նրա լոյս հոգին դասի «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ»:

Այլեւ հայցում ենք, որ Բարին Աստուած հանապազ օրհնութեամբ հովանի ու

պահապան լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանց. Ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 23-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 823